

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմեն Ռաֆայելյան Ռուսելի ԱԶ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-24/63 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Արմեն Ռաֆայելյան Ռուսելի ԱԶ4	Ղեկավարի գրասեղան՝ պատրաստված ամբողջովին եռաշերտ 18մմ հաստությամբ լամինատից, եզրերը պետք է պատված լինեն 6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով: Սեղանի երկարությունը 170 սմ, լայնքը՝ 80սմ, բարձրությունը՝ 70սմ: Գրասեղանի դիմային հատվածը պետք է ամբողջովին լինի փակ: Գրասեղանը պետք է ունենա երկու կախովի կամ ամրացված շարժական դարակներ, դարկներից յուրաքանչյուրի արտաքին չափը՝ լայնությունը՝ 38սմ, բարձրությունը՝ 15սմ: Գրասեղանի հավաքածուն ներառում է նաև դիմադիր սեղանը, կողադիրը և գրապահարանը: Կողադիրի չափերը՝ Ե80*բ60*խ40*սմ, 18մմ հաստությամբ լամինատից պատրաստված (վրադիր հատվածը՝ երկշերտ, եզրերը պետք է պատված լինեն 3.6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով) բաժանված երկու մասի՝ ձախ կողմից մեկ դուռ (արտաքին չափերը, նվազագույնը՝ 134*բ50սմ), ներսի հատվածը բաժանված հավասար երկու հատվածների, իսկ աջ կողմում՝ 2 դարակաշար (արտաքին չափերը, նվազագույնը՝ 139*բ26սմ): Դիմադիրի չափերը՝ բ60*լ60*Ե85սմ, 18մմ հաստությամբ երկշերտ լամինատից պատրաստված, եզրերը պետք է պատված լինեն 3.6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով: Հավաքածուի բոլոր դռները և դարակաշարի եզրերը պետք է պատված լինեն պոլիվինիլքլորիդային թերմոպլաստե եզրաշերտերով: Դարակների ուղղորդիչները՝ պարտադիր բարդ գնդիկավոր-վակուումային

տեսակի, դռների ծխնիները՝ վակուումային բարդ մեխանիզմներով: Հավաքածուն ներառում է նաև գրապահարան, պատրաստված 18մմ հաստությամբ լամինատից, չափերը՝ ք200սմ\*լ170սմ\*խ40սմ: Գրապահարանը բաղկացած է երկու հավասարաչափ մասերից /յուրաքանչյուրը 85սմ/, աջ կողմը՝ լամինատե 2 դռներով, որի մի հատվածը պետք է նախատեսված լինի հագուստի համար՝ համապատասխան կախիչներով, իսկ մյուս հատվածը՝ առնվազն 4 դարակաշարերով, ընդ որում, դարակաշարերի և հագուստի համար նախատեսված հատվածները պետք է բաժանված լինեն լամինատե միջնապատով: Ձախ կողմի վերնամասը՝ ապակյա երկու դռներով, 3 լամինատե դարակաշարերով, իսկ ստորին հատվածը՝ լամինատե երկու փոքր դռնակներով, 2 լամինատե դարակաշարերով: Պահարանի եզրամասերը պատված են պոլիվինիլքլորիդային թերմոպլաստե եզրաշերտերով, դռների ծխնիները՝ վակուումային բարդ մեխանիզմներով: Բոլոր դռները պետք է ունենան որակյալ և ամուր բռնակներ: \*Ընդ որում, բնութագրով ներկայացված չափերի թույլատրելի շեղումը կազմում է +-5%: Ապրանքի տեսքը պետք է համապատասխանի ներկայացված նմուշին կամ բավարարի տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջներին: Ապրանքի պատրաստման համար օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր (չօգտագործված): \*Հավաքածուի գույնը և տեսքը ներկայացված են կից նկարներով, իսկ նմուշին կարող եք ծանոթանալ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4 հասցեում, Մասիսի համայնքապետարանի վարչական շենքում:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Армен Рафаелян Румелович ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЦУУՀ-ԷՍՃԱՊՁԲ-24/63 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		